

Հոկտեմբերի 14-ը — կիրակի, — մի փառաւոր տօն էր Ալէքսանդրապոլի ամբողջ ազգաբնակչութեան համար: Այդ օրը նշանակւած էր քաղաքիս ծր-խական և քաղաքային (ինքնավարութեան) դպրոցների հանդիսաւոր թափօրը՝ ՚ի պատիւ համազգային զոյգ մեծագոյն յորելեանների:

Արդէն ժամը 9-ից Սր. Փըր-կիչ եկեղեցու հրապարակը լցւած էր հասարակութեան բոլոր խաւերի հոծ բազմութեամբ ու դպրոցների աշակերտ-աշակերտուհիներով, որոնք շարժ շար կանգնած էին իրենց տօնական դրօշներով (ամեն մի բաժանմունք, դասարան առանձին-առանձին) և դպրոցների անունը ոսկէ տառերով ցուցնող մեծ դրօշակներով, որ շատացող բազմութիւնը կարգում էր առանձին ինքնարաւական հրճանքով: Լսուած էին հոգեկան անվերապահ ուրախութիւնն արտայայտող՝ հատ-հատ կանչեր — «Ար-դութեան Գպրոց — կեցցէ Արդութեան Գպրոց», «Սր. Փրկչի վիճակային Գրպրոց — կեցցէ վիճակային Գպրոց» և այլն:

Ժողովուրդն հեղափոխ շատանում էր: Մինչ այդ եկեղեցում կատարւում էր Հայրապետական մաղթանք, որին ներկայ եղաւ գրեթէ բոլոր հայ աշակերտութիւնը՝ որքան կարող էր մեծ եկեղեցին տեղաւորել:

Պատարագին երգում էր Արդութեան դպրոցի աշակերտուհիների երկ-ձայն երգեցիկ խումբը:

Մաղթանքից առաջ Տ. Յակոբ քահ. Խաչվանքեան խօսեց ոգևորւած մի քարոզ, որը շատ լաւ տպաւորութիւն արեց: Երկարօրէն կանգ առնելով զԸ-խաւորապէս Տառերի զիւտի վրայ և պարզօրէն բացատրելով զրի կատարած լուսաւոր դերը հայի ազգային միշտ վտանգւած կեանքում, Տ. Խաչվանքեան արեց իր ուժեղ և ուղիղ եզրակացութիւնը՝ թէ գրեթէ գիւտով, գրականութեան և ապա տպագրութեան շնորհիւ հայի ազգային երեւոյն կեանքը վերածնուեց ու նրանց շնորհիւ դիմադրեց յետագայ դարերի արհաւիրքներին և հայ գիրն ու հայ շունչը բերեց հասցրեց մեզ՝ այնքան մեծ և զօրեղ մարտունակներից յետոյ, թողնելով մի սուրբ աւանդ յետնորդներին՝ նմանել մեծ նախնիքներին, նրանց պէս հայ ապրել և հայ մեռնել:

Մաղթանքից յետոյ ցերեկայ ուղիղ 12 ժամին սկսեց հանդիսաւոր թափօրը: Դէրբէնդի գնդի զինւորական երաժշտախումբը հնչեցրեց քայլերգը ու առաջ շարժեցին նախ՝ զրոշակակիրներն, ապա նրանց յետևից վեց կարգ կողք է կողք հայ աշակերտ-աշակերտուհիները, թւով հազար հոգի և վերջը ժողովրդական տասը հազարանոց բազմութիւնը:

Իրբև շղթայ գնացքն օղակաւորում էին համբարական դրօշակները: Ժողովուրդը պանդանում էր օրինակելի կարգ և՛ չնայելով քաղաքի փողոցների նեղւածքին ու մանր տեղացող անձրևին՝ սրտաշարժ ուրախութեան ու հրճանքի տրամադրութիւնը մնաց մինչև վերջն էլ աշխոյժ ու վառ:

Երբ գնացքն ուղղուեց դէպի հայ կաթողիկոս ժրական գաղտնք, պէտք էր տեսնել թէ ի՞նչ քննարան էր բացւում — տարածւում աչքերի առջև: Հո-

կեզմայրութեան զպայմանքով համակ-ւած՝ անկարելի էր այլևս խողազօրէն դիտել իսկապէս հազազուտ, իսկապէս յուզիչ տեսարանը... Երկու հարիւր սածէն երկարութիւն ունեցող թերփողոցը՝ յարակից փողոցներով ու նրբանցքներով լցւած էր ծով-զուլու-ներով, ժողովրդի, մեծի ու փոքրի ծովացած բազմութեամբ, որ շարժւում էր, ալիքանման ծածանւում և չէր սպառուում ընդարձակելով...
Անձրևը ոչնչով չզօրեց խանգարել թափօրը, թէև հէնց սկզբից մանր մաղկ սկսեց և դրեթէ անընդհատ շարունակուեց մինչև նրա վերջը: Գուցէ այդ էր պատճառը, որ չլուսահանւեցաւ գերազանցապէս հազազուտ այդ տեսարանի զմայլելի պատկերը: Ափսոս...

Սակայն հոկտեմբերի 14-ի թափօրը, կուլտուրական յաղթանակով հրճուող բազմութեան հանդիսաւոր գնացքն, իր գործը կատարեց լիակատար կերպով. թափօրը կատարեալ տօն եղաւ հանրութեան համար, մաքուր ուրախութեան, հոգեցունց միխթարութեան զպայմանքով համակելով ամեն սիրտ, ամեն միտք:

Այդ օրն ու այդ տօնը անջնջելի յիշատակ պիտի թողնեն յատկապէս մանուկ սրտերի մէջ, որոնց համար էր ծրագրւած փառաւոր գնացքը: Մանկական սիրտը տօնական հանդիսով կրթելու այլ լաւագոյն եղանակ դժւար թէ գտնուէր:

Նախաձեռնողներն ու կազմակերպողներն գերազանցօրէն հասան իրենց նպատակին: Ու պատիւ նրանց:

Անաղմուկ կերպով հոկտեմ. 14-ին Ալէքսանդրապոլն իսկական ժողովրդական տօն կատարեց, մեծի ու փոքրի հաւասար մասնակցութեամբ արժանի մեծարանք տալով համազգային մեծ յորելեաններին, ազգային մեծ երախտաւորներին:

ՄԵՆ ՏՕՆԻ ԿՅՏԱՐՈՒՄԸ

Կիրակի, հոկտեմբերի 14-ին Աղէքսանդրապոլի փողոցներն ընդունել էին տօնական կերպարանք:

Նախօրօք որոշւած ծրագրի համաձայն, այդ օրը ցերեկայ հանդիսաւոր պատարագից յետոյ, տեղիս հայ դպրոցների աշակերտ աշակերտուհիները հանդիսաւոր գնացքով պէտք է անցնէին բոլոր դպրոցները և ամեն մի դպրոցում շնորհաւորական ճառեր արտասանէին տառերի զիւտի 1500 և տպագրութեան 400 ամսակի առթիւ:

Շնորհիւ տեղի ունեցած որոշման, այդ օրը Ս. Փրկչի եկեղեցում կատրուեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ նոյն եկեղեցուն կից դպրոցից սկսեց հանդիսաւոր գնացքը դէպի միւս դպրոցները: Առջևից գնում էին համբարներն իրանց զրօշակներով, զինւորական երաժշտական խումբը, բոլոր հայ ծխական և քաղաքային դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները ուսուցիչներն և իս միասին և ապա երկու սեռի բազմացած բազմահազար ժողովուրդը: Ամեն մի դպրոց ունէր իր սեփական դրօշակը, որոնց վրայ ի թիւս այլ մակագրութիւնների փողփողում էին ոսկէ տառերով գրւած «1500» և «400» պատկանելի թւերը: Բացի այս դպրոցական դրօ-